ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 11-12
09.06.2011թ.

ՀՀ Արդարադատության նախարար
պարոն՝ Հ.Թովմասյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Նախարար,

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ "Արովյան" ՔԿՀ-ում գտնվող երեք կին դատապարտյալներ՝ Լեյլի Վասիլի Չոփինյանը, Ռուզաննա Սուրենի Մանուկյանը և Ամալյա Մաքսիմի Մնացականյանը, ինչպես նաև "Դատապարտյալների հիվանդանոց" ՔԿՀ-ում գտնվող երկու դատապարտյալներ Արմեն Թաքվորյանը և Հովհաննես Դոխոլյանն ունեն պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություններ, ինչը նրանց պատժի մնացած մասի կրումից ազատելու իրավական հիմք են հանդիսանում, համաձայն ՀՀ կառավարության, 26 մայիսի 2006թ. # 825 -Ն որոշման:

Ներքևում ներկայացնում եմ նրանց բժշկական ախտորոշումները, որոնք համապատասխանումեմ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

"Արովյան" քրեակատարողական հիմնարկից՝

1,**Չոփինյան Լեյլի Վասիլի** /Ծնվ.1958թ/D-s,,C-r colli uteri պարամետրալ-վագինալ վարիանտ, խառը ձև: T3ABNXM0,,:

2,**Մանուկյան Ռուզաննա Սուրենի** /ծնվ.1970թ/ Ախտորոշումը - <<Բրոմխիալ աստմա: Խառը ձև, ծանր աստիճանի, հաճախակի սրացումներով, թոքերի էմֆիզեմա: Շնչառական անբավարարություն 2-3աստիճանի,խառը տիպի վենտիլյացիոն խանգարումներ օբստրուկցիայի գերակշռմամբ, կոմպենսացիայի զգալի իջեցումով: Խրոնիկական օբստրուկցիայի բրոնխիտ, թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի 2 աստիճանի իջեցում: Զարկերակային հիպերտենզիա 3-րդ աստիճան, հիպօքսիկ էնցեֆալոպատիա, ցնցումային համախտանիշ: Կարդիոմիոպատիա, սիրտ-անոթային անբավարարություն 2 աստիճան: Շաքարային դիաբետ 2-րդ տիպի,միջին ծանրության: Դեղորայքային խրոնիկ թիրիոդիտ, դեղորայքային էութիրեոզ: Մետաբոլիկ սինդրոմ: Ալիմենտար ճարպակալում 3-4-րդ աստիճան>>:

ՀՀ Երևան 0025, Պուշկինի 3ա, 5 սենյակ Pushkin 3a., apt.5 Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 56 79 23, e-mail: pmg.armenia@hra.am

3,**Մնացականյան Ամալյա Մաքսիմի** /ծնվ.1953թ/Ախտորոշում--ԱՀ 2-րդ աստիճան, վիճակ աջ կրծքագեղձի հեռացումից հետո, արգանդի էքստրիպացիա c-r-ի կապակցությամբ, խրոնիկական բրուցելյոզ, անհայտ էտիոլոգիայի ալլերգիա, պորտալ ճողվածք:

"Դատապարտյալների հիվանդանոց" քրեակատարողական հիմնարկից՝

1. **Թաքվորյան Արմեն՝** ախտորոշումը՝ Դիֆուզ Բ խոշոր բջջային լիմֆոմա 4բ շրջան, պերիֆերիկ աբդոմինալ ավշային հանգույցների, լյարդի, փայծախի, պլևրայի և պերիկարդի ախտահարումներով:

2. **Դոխոյյան Հովհաննես՝** ախտորոշումը՝Աթերոսկլերոզ, արտերիալ հիպերտենզիա կրիզային ընթացքով, աթերոսկլերոտիկ էնցեֆալոպատիա: Հիպոտրոֆիկ և կիստոզ ,լակունար փոփոխություններ: Գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումից հետո կայուն մնացորդային երևույթներ: Ակինետիկ ռիգիտ սինդրոմ: Դեպրեսիվ սինդրոմ:

Քանի որ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություններով դատապարտված անձանց գործերով միջգերատեսչական հանձնաժողովի գործառույթները կանոնակարգված չեն, չկան համապատասխան ժամանակացույցեր և ընթացակարգային ուղեցույցներ՝ հիվանդների կարգավիճակի հարցը մնում է անորոշ ժամկետով անլուծելի:

Դիմում եմ Ձեր աջակցությանը՝ նշված անձանց պատժից ազատման խնդիրների հնարավորինս արագ լուծելու խնդրանքով, քանի որ այդ անձինք իրենց առողջական ծանր խնդիրների պատճառով ոչ միայն ի վիճակի չեն պատիժը կրել, այլև որևէ վտանգ չեն կարող ներկայացնել հասարակությանը:

Հարգանքներով՝

ՀՀ ԱՆ ՔԿՀ հասարակական
վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների
խմբի նախագահ՝ Ա.Սաքունց

ՀՀ Երևան 0025, Պուշկինի 3ա, 5 սենյակ Pushkin 3a., apt.5 Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 56 79 23, e-mail: pmg.armenia@hra.am